ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամերիկաի համար տարեկան 4 տոլար թղթադրմ.
Եւրոպաի և այլ տեղերի համար արկ. 20 ֆրանգ
Տնօրէնութիւնն ինք կը վճարէ փոստի ծախքը։
Բաժնեգիրները կանխիկ կը վճարուին։ Վեցամսեայ կամ եռամսեայ բաժնորդութիւնները ալ կընդունուին, առանց ոեւէ յաւելման բաժնեգնին վրայ։
Խմբագիր-Տնօրէնին հետ կարելի է տեսնուիլ խմբագրատունը (rue Vacon, 50) ամեն օր կէսօրէն յետոյ, ժամ 2էն մինչև 4 միայն։

Բ ՏԱՐԻ ԹԻՒ 19

1886 ՀՈԿՏԵՄԲԵՐ 23

(ՀՈԿՏ. 11 Հ. Տ.)

ՃԱԹԱԿ

Կը հրատարակուի Դշ. և Երք. օրեր

ՊԱՏՄԱԿԱՆՆԵՐ

Ծանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։
Ծանուցման 1 մէջք դիրը 1 սանտիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանտիմ։
Նամակ կամ ծրար պէտք է ղրկել խմբագրութեան հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*, MARSEILLE (France)

Les annonces, en français et en arménien, sont reçues au bureau de la Rédaction (Rue Vacon, 50).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի առաջարկութիւն առ հայ հայրենասիրս.—Նպակոյ արժէքին բարձրացումը.—Հայեր ի Փիւրքիա.—Թրքական մի բարբարոսութիւն ի Սամսոն. — «Արմենիա»ին նպաստ. — «Արմենիա»ի պատասխաններ. Արտասահմանի լուրեր. — Ծանուցումներ:

ՄԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌ ՀԱՅ ՀԱՅՐԵՆԱՍԷՐՍ

—

Անուրանալի ճշմարտութիւն է թէ առանց որոշ մի նպատակ ունենալու, երբէք գործի մը չի ձեռնարկուիր. լինի նա անհատական թէ ընդհանրական։ Մեր նպատակը ընդհանրականին վրայ խօսել լինելով, մէկ կողմ կը թողում զանհատականը։

Գործ մը որ ընդհանրական է, բնականաբար մէկէ աւելի գործիչներ կունենայ. և գործ մը անկարելի է որ իւր նպատակին չի հասնի, երբ գործիչք արժանաւոր, հմուտ և փորձառու անձինք են և միևնոյն ժամանակ ղոյն գործ ի կատար ածելու համար ծրագրուած ուղղութեան կը հետեւին. ապա ուրեմն այն գործերը որ չեն յառաջադիմեր. դէպի նպատակ, պէտք է որ՝ կամ գործիչք անարժան լինին և կամ գործելու ծրագիրը ուղիղ չը լինի։

Ահա, ղոյս պարբերութիւն առաջի աչաց ունենալով, քննենք թէ ընդհանրապէս մեր ազգային գործերը ինչ պատճառաւ չեն յառաջադիմեր. միթէ՞ կարելի է որ չունենայ իւր յաուկ պատճառ, քանի որ ամեն հայ կը վախճանի ազգը բարօրութեան մէջ և նորա նպատակը կատարուած տեսնել, մինչդեռ ամեն կողմ խումբեր, ակումբներ, միութիւններ և ընկերութիւններ կազմուած են և կը կազմուին ազգը իւր նպատակին հասցնելու համար. բայց երբ ղոյս ամենայն լուրջ կերպով քննենք, պիտի համոզուինք թէ՝ Հայ ազգը տակաւին ղպրի յառաջադիմութիւն մը չէ ըրած դէպի նպատակն։

Երբ վախճանինք գիտնալ տարբ պատճառը և այս մասին հարցում մը ուղղենք մեր մէջ գտնուած վարձառու անձանց, կը պատասխանեն թէ՝ «Հայերը չունին համերաշխութեամբ գործելու ոգի, թէ հայերը չունին միաբանութիւն, թէ հայերը դաղտնասէր չեն, և թէ հայ գործիչք, մեծաւ մասամբ, անարժան, անվորձ, խարեբայ և բաղդախնդիրներ են անոնք։ Ահա այս պատճառաւ է որ մեր գործերը ընդհանրապէս չեն արժանանար իրենց նպատակին և անգործադրելիութեան կը մատնուին»։ Համաձին թէ՝ այս դիտողութիւնները իրաւացի լինին. բայց սա անտրանալի է թէ այս պակասութիւնք աշխարհիս վրայ միայն հայոց մենաշնորհեալ չեն, այլ քիչ շատ կը վերաբերին մարդկային բոլոր ազգերին. բայց ի՞նչ է պատճառը որ ամեն մեղ չըլլապատող և մեղ վիճակակից եղող ազգութիւնք կը յառաջադիմեն ու մենք չենք յառաջադիմեր. ահա ղոյդ պէտք է ուրանալ և դանել։

Հայոց մէջ՝ մինչև այժմ շատ մը ընդհ[ուր]ներ յարուցուած են և կամ գործելու ձեռնարկուած է, բայց ասոնք և ոչ մին կատարելապէս իւր նպատակին հասած է. ո՛րը մի ժամանակ գործուած և ապա թողուած է, ո՛րը և ոչ իսկ գործելու ձեռնարկուած է և ո՛րն ալ կաղնիկաղ շարունակելու վրայ է, առանց մի ղգալի յառաջադիմութիւն ունենալու։ Թողում մէկ կողմ այն ամեն ընդհ[ուր]ները, որք ընդհանուր հայութեան և կամ Թուրքիաբնակ և Ռուսիաբնակ հայոց կը պատկանին, և քննենք մեր Եւրոպաբնակ և աղատ երկիրներու մէջ ապրող հայոց գործերը։ Ոոյս մէջ տարիէ մը աւելի է (1) որ Եւրոպիոյ մէջ հայ հայրենասիրոյ կեդրոնական միութիւն հաստատելու խընդիր մը կայ, որը մինչև ժամն չէ լուծուած. միթէ՞ կարելի է որ չունենայ յաուկ պատճառ մը, քանի որ ամեն կողմէն ոգևորութեամբ ընդունուած է այդ հրատէր և մասնախումբերը կազմուած պատրաստ կոպասին, ժամ յառաջ հաստատուելիք կեդրոնին հետեւելու։

Ա, յո՛, այս խնդիր ունի իւր յաուկ պատճառը և ահա այն իսկ պատճառաւ է որ ընդհանրապէս մեր գործեր չեն կարող կանոնաւորապէս յառաջադիմել ի մեր մէջ վարձառու, հաւատարիմ և վստահելի գործիչ չունենալնուն որ ընկերներու կոպասեն։

Քանի որ տակաւին կեդրոնական միութիւն մը հաստատելու ոգին մեր մէջ կենդանի է և չէ լուծուած, նոքա որք կը փափաքին ժամ յառաջ զայդ խնդիրը լուծելով ի գլուխ հանել, զայս պէտք է ի նկատի ունենան որ կեդրոնի գործիչք, անկախ դիրք մը ունեցող, այսինքն որևիցէ մի անձնական պարագմունք չունեցող անձինք լինին, որք Հայրենասէր խումբերու ամսական տուրքերովը պահպանուելով իրենց միակ զբաղումը պէտք է ընեն գործը նպատակին հասցնել և պէտք է այնպիսի մի պետ ընտրել լինի նա եկեղեցական և կամ աշխարհական, որ աշխարհիս ամեն կողմը գտնուած հայոց վստահութիւնը վաստկած, փորձառու և հաւատարիմ մէկը լինի, որ պիտի այն ամեն հայք, որք կերկընչին թէ մի գուցէ բաղդախնդիրներ խառնակիք լինին և չեն ուղեր իրենց լուման վտանգել չունենան որ և իցէ երկիւղ։ Սա ևս պէտք է դիտնալ որ կեդրոնի գործիչք պէտք չէ երբէք որ չափազանց ղբաղացող և վախկոտ անձինք լինին, որք աշխարհիս ամենաազատ մի մայրաքաղաքին մէջ կազմեալ կեդրոնին գլուխ լինելով՝ բարձր ի գլուխ պէտք է գոչեն թէ՝ հայկական դասը պաշտպանելու համար Հայոց մէջ կազմեալ յեղափոխական մարմնոյ պետերն են։

*Եթէ առարկուի թէ՝ յայտնի յեղափոխական մի կեդրոն ունենալը ազդին ձեռս կը բերէ, ևս կը պատասխանեմ թէ միմիայն կեդրոնը յայտնի լինելով ոչինչ ձեռս կուգայ մեր գործառնութեանց, այլ ընդհակառակը, երբ կեդրոնը յայտնի չը լինի, ամենայն ինչ աւելի շուտ կը յայտնուի և ազգը տակաւին կը շարունակէ բաղդախնդիրներու խաղալիկ լինիլ։ Կը հարցունեմ թէ յոմանք պէտք է երկնչիլ յայտնի մի յեղափոխական կեդրոն ունենալով, ո՛վ հոհմ հայրենասէրներ. միթէ եւրոպիոյ քաղաքակրթեալ և ճշմարտասէր տէրութիւններէն, որք արտասուքի տեղ արիւնը կը ճանչնան աղերսանաց նշան, որք ընդհանրապէս ճշմարտութեան դիմակին տակ անլուր բարբարոսութիւններ կընեն իրենց իրաւացի կամ անիրաւ նպատակը յառաջ տանելու համար և որք իրենց անմիջական պաշտպանութեան տակ գտնուող խեղճ ազգութեանց իրաւունքը ոտնակոխ և նոցա ազերսարկու ձայնը անլսելի ընել ջանալով հեռուները ճշմարտութեան ջատագով լինել կը փութան. միթէ՞ ի նմանի պէտք է երկնչիլ որք մեր անմեղ աղերսանաց՝ «պատեհ առթին պէտք է սպասել» անփոփոխելի խօսքը յիշեցնելով՝ միշտ մեզ կուսուցանեն թէ պատեհ առիթը միմիայն արեամբ և յեղափոխութեամբ ձեռք կանցուի. Ցո՞րմէ պէտք է երկնչիլ արդեօ՞ք Հայաստանի տէր եղող բարբարոս կառավարութիւնէն որոյ պաշտօնեայք ամեն ջանք կընեն՝ յեղափոխութիւն բառին նշանակութիւնն իսկ չի գիտցող մեր խեղճ հայրենակիցները, որևիցէ անհատական, ընդդրացական կամ եկեղեցական խնդիրներ մէջ ունեցած վէճերնին իբրև յեղափոխական ձգտումներ ցուցընելով կառավարութեան, իրենց մեծ պաշտօններ և պարգևներ կորզելու համար ի մահ և

(1) Կարելի է որ այս խնդիր աւելի առաջուընէ յարուցուած լինի, բայց մեք ղոյն «Արմենիա»ի մէջ տեսնուած օրէն հաշուի առած ենք։

ՄՇԱԿ

Թիֆլիս, 23/5 հոկտ. 1886 ԳՈՒՆԱԿԱՆ

Ամսագիր գրական և քաղաքական

Ի ՄԱՐՏԻՐՈՍՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՒՈՅ

(Շարունակութիւն 18րդ թիւն)

Ահա ուրեմն մի կողմից մեր հոգևորականութիւնը, որ ամեն կերպով ձգտում էր ամրացնել իր դիրքը ժողովրդի մեջ, ամեն կերպով ջանում էր ամրացնել իր ազդեցութիւնը ժողովրդի վրայ, ամեն կերպով ձգտում էր ժողովրդի մեջ պահպանել ամեն տեսակ նախապաշարմունքներ, որոնք ամենից շատ նպաստում էին նրա նպատակին հասնելու համար

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐԱՆԻ
Ա ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

Ա. Թումանյանի հուշարանի հանդիսավոր բացումը տեղի կունենա հոկտեմբերի 22-ին, ժամը 12-ին, Թումանյանի տանը-թանգարանում (Ալավերդի, Դսեղ)։

Հուշարանի բացմանը կներկայանան Թումանյանի ընտանիքի անդամները, գրողներ, արվեստագետներ, գրականագետներ, Թումանյանի ընկերներ, Լոռու մարզի պատվիրակությունները, ինչպես նաև Թումանյանի ստեղծագործությունների ընթերցողներ։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱՎԱՌԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԻ ՎԱՍՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ

Հայկական ՍՍՀ գավառային արվեստի վաստակավոր աշխատավորներ Ա. Ալեքսանյանին, Ա. Ավետիսյանին, Ա. Ղազարյանին, Ա. Ղազարյանին, Ա. Ղազար

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ԴԱՄԱՌ–ԲԱԹԻՊԱՑԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
«Թիֆլիզի հայ. գրբ. հրատարկ. ընկերքե.»

Մեծանուն բանաստեղծ Գամառ–Քաթիպայի (Ռ. Պատկանեանց) ռահնամներըը պարունակող մի գիրք է 176 երեսներէ բաղկացած։ Սկիզբը դրաւած է հեղինակին պատկերը։ Գամառ–Քաթիպայի բանաստեղծութիւնները մի քանին արդէն ծանօթացուցած լինելով մեր ընթերցողներէ, աւելորդ կը համարինք դրել այդ մասին։

Կը ծախուի «Արմենիա» լրագրի խմբագրատունը ի դին 1 ֆրանգ և 75 սանթիմի։ Մարսէյլէ դուրս ամեն տեղի համար 2 ֆրանգ փոստի ծախքին հանդերձ։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԴԱԼԵԱՆԻ

Ա. ՀԱՅ ԴԻՒՅԱԶՆՈՒՀԻՄՐ գին 50 սանթիմ.
Բ. ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻ » 20 »
Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՅԷԼԻ » 40 »

Ձը ծախուին Մարսէյլ, «Արմենիա» լրագրի խմբագրատունը։

Ուտար քաղաքացիներին կը դրկուի փոստով, եթէ վերոյգրեալ գիներով Ֆրանսական, բրքական կամ ռուսական փոստի թղթադրոշմ դրկեն «Արմենիա»ի խմբագրութեան։

ՍԱՐԴԻՍ Գ. ՀԱԼԱՃԵԱՆ

ՑԱՆՑՆԱԿԱՏԱՐ Ի ՄԱՐՍԷՅԼ

ԱՐՏԱՔՈՒԹԵԱՆ ԵՒ ՆԵՐԱՔՈՒԹԵԱՆ

ԱԳՐԱՆԱՅ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Գ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԴԱԼԵԱՆԻ

ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՅԷԼԻ

Ե Ո Ի Ե Ր

ՀԱՅԻ ՄՈՒԱՅՈՒԱԾ ԴԱՏԸ ՊԱՇՏՊԱՆՈՂՆԵՐԻՆ

Հայաստանի վիճակին նկատմամբ սրտառուչ մաղթանքներ և մուտծուածներ պարունակող մի տետրակ է։

Հայաստանի բնակիչներէն Գ. Խաչէկի դրած այդ հայրենասիրական Սաղմոս կը ծախուի «Արմենիա» լրագրի խմբագրատունը։ Դին 40 սանթիմ, փոստի ծախքովը հանդերձ։

Մի բանաստը հայ կը ցանկայ ունենալ Բաֆֆիի «Դաւիթ Բէկ»ի Ա հատորը և Ղ. Աբովեանցի «Վէրք Հայաստանի»ն։ Կը խնդրուի որ ունեցողը իմացունէ խմբագրութեանս թէ ի՛նչ գնով կը համաձայնուի տալ։ Լաւ վճարում կը խոստացուի։

—

Ազգային երաժշտահայր Արժանայիշատակ Թաշճեան Նիկողոսի աշակերտներէն մէկը որ լաւ ձայնագրութեան դիտութեամբը եկեղեցական երգեցողութեան քով տեղեակ ըլլալուն վաւերական վկայականները ալ ունի, կը փափաքի ազգային եկեղեցւոյ և դպրոցի մէկուն մէջ պաշտօնավարել։ Ուղղը կրնայ դիմել խմբագրութեանս, անոր հետ բանակցութեան մտնելու համար։

LA TRIBUNE DES PEUPLES

Ինչպէս կը տեսնուի լրագրիս դ երեսը դրուած ծանուցումէն, Tribune des Peuples ընկերվարական ամսաթերթի յուլիս—օգոստոսի թիւը հայերի նկատմամբ համակրական յօդուածները կը պարունակէ։ «Արմենիա»ի խմբագրութիւնը բաւական քանակութեամբ ստացած է այդ թիւէ, ղրկելու համար իւր բաժնորդներէ ցանկացողներին։ Մէկ օրինակը կը տրուի 25 սանթիմի Մարսէյլի մէջ. ուրիշ ամեն տեղերի համար 30 սանթիմ, փոստի ծախքովը հանդերձ։

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՁԱՆԱՁԱՆ ԸՆՏԻՐ ԴՐԵԱՆՑ

Բաւական ներքսեան ընկերութիւնը 1300 թիւ վիճակահանութեան առնելը չըվարձրութեան հանած է որոյմէ 600ը պիտի չահին վանապան ընտիր գիրքեր որոց անուններըը նշանակուած են առմներին վրայ։ Վիճակահանութիւնն պիտի կատարուի հոկտեմբեր 5/17ին, վերոյիշեալ ընկերութեան դրասենեակը։ Տոմակներըը կը ծախուին 6 ղրուշի։ Ուղղը կրնայ «Արմենիա»ի խմբագրատունէն ալ առնալ վճարելով 1 ֆրանգ և 50 սանթիմ։

ԲԱՖՖԻԻ ԴՈՐԾԵՐԸ

ԿԱՅԾԵՐ

ՀԱՏՈՐ Ա

Ազգային վիպագիրը Պրն. Բաֆֆիի գործերին մէջ առաջին տեղը կը գրաւեն ԿԱՅԾԵՐը։ Ա.յս գիրք կը ծանօթացունէ ընթերցողը տաճկական և պարսկական Հայաստանի գլխաւոր տեղերին հետ, հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կուտայ քուրդերի գաղտնի ցեղերի և հայերի դրութեան, վարքի և բարքի մասին։ Նա ցոյց կը տայ այն ծրագիրը որին պէտք է հետեւին Հայաստանի մէջ գործել ուզողները։ Մի խօսքով թէ՛ իւր ազգային ընտիր վիպասանութիւն և թէ՛ իւր հայրենասիրական գործունէութեան վարդապետարան և ծրագիր, արժան է որ գտնուի այս գիրք ամեն հայրենասէր Հայի տունը։

***

ՋԱԼԱԼԷԴԻՆ

1877ի ռուս–թիւրքական պատերազմի ժամանակ Շէյխ Ջալալէդդինի արշաւանքին պատճառով Տաճկաստանի հայերի կրած ապէտներուն մէկ ապէհաբոյ նկարագիրն է։ Դրքին սկիզբը կայ հեղինակին, Գ. Բաֆֆիի պատկերը։

***

Վերոյիշեալ երկու գիրքերը կը ծախուին «Արմենիա» լրագրի խմբագրատունը. ԿԱՑԾԵՐը Հատոր Ա. 6 ֆր. և 50 սանթիմ։ «Ջալալէդդին»ը, 2 ֆրանգ և 30 սանթիմ. Մարսէյլէ դուրս ամեն տեղի համար փոստի ծախքովը հանդերձ՝ ԿԱՑԾԵՐ Հատոր Ա. 7 ֆրանգ. «Ջալալէդդին» 2 ֆր. և 50 սանթիմ։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՏՈՐ Ա.

կենդանական հիւսուածաբանութիւն
եւ
Մարդկային կազմախօսութիւն ու բնախօսութիւն

Ն. Ցաղտարեան էֆէնտիի այս բազմաշխատ գործն՝ որ ժամանակէ մ՚ի վեր տետր տետր կը հրատարակուէր, լրացած է։

Ա.յս գործն՝ իբր գիտական մեծ աշխատասիրութիւն՝ իւր տեսակին մէջ կընայ առաջին համարուիլ ի Հայս Կ՚ուսուցանէ ինչ որ հարկ է գիտնալ մարդու մը իւր մարմնոյ նըկատմամբ։

Գտարտուած է իբր դասագիրք Ազգ. երկրորդական վարժարանաց առ այս արդէն Ուսումն. Խորհուրդն ի Հոն մանաւանդ զայն քննելով յանձնարարած է նորա դործածութիւնն։ Ա.յս գիրքը կընայ ծառայել նաև իբր առաջնորդ մանկապետական և նա մանաւանդ բժշկական վարժարանի ուսանողաց. մանաւորապ առանձինն ուսման առաջնորդ ալ կրնայ լինել։ Վերջապէս այս գեղեցիկ երկին ամէն գիտուածը անձանձ գրասան մէջ կ՚արժէ որ գլխաւոր տեղ մը բռնէ։

Գործոյն վերջը կը գտնուի հայ–ֆրանսերէն բառգրքոյկ մը որ կը դիւրացնէ գիտական նորաստեղծ բառից հասկացողութիւնը։

Գիրքը շուրջ 400 երեսներէ կը բաղկանայ, մաքուր տպագրութեամբ և 226 գեղեցիկ նուրբ պատկերներով զարդարուած, որոց մասին հեղինակը որ եւ է զոհողութիւն չէ խնայած և որք կարի լաւ կը դիւրացնեն ուսումն։

Կեդրոնատեղին է Սրամեան դրատուն ի Պահչէ–գափու Համիտիէ ճաստէսի թիւ 34։ Դինն է 40 ղրշ.։

BIBLIOGRAPHIE
LA
TRIBUNE DES PEUPLES

REVUE INTERNATIONALE DU MOUVEMENT SOCIAL

Dans les cinq parties du monde

Rédaction et administration *Librairie des deux mondes* Paris, 17, rue de Loos.

Abonnement France : Un An 5 francs Union postale 6 francs.

Sommaire du N° 6 Septembre-Octobre

La Révolution dans les Beaux-Arts CASSIUS. — La situation politique et économique dans la République Argentine. TH.. — La Crémation Électrique, Dr ROSELLI. — L'organisation des Fénians. — Les affaires d'Arménie, UN ARMÉNIEN. — Le Code industriel en Russie GOLOVINE. — MOUVEMENT SOCIAL INTERNATIONAL EUROPE Grèce. AFRIQUE Madagascar, Sénégal, Maroc, AMÉRIQUE DU NORD Canada, États-Unis, Guatemala, Nicaragua, Mexique, San Savaldor, AMÉRIQUE DU SUD, Pérou, Bolivie, OCÉANIE, Australie.

REVUE BIBLIOGRAPHIQUE INTERNATIONALE

Livres, Journaux, Revues,

Un numéro de cette revue est envoyé à TITRE D'ESSAI *gratis et franco* à tous ceux de nos lecteurs qui en feront la demande à la LIBRAIRIE DES DEUX-MONDES Paris 17, rue de Loos, avec le BULLETIN donnant l'ANALYSE, des publications en vente à cette librairie.

On s'abonne sans frais dans tous les bureaux de poste.

A. H. CREET & Cie

COWNPORE N. W. P. INDES ANGLAISES

Négociants-Importateurs, Exportateurs, Commissionaires, Commissaires priseurs, Contractants (Fournisseurs) et fabricants de cuirs de toute qualité.

Ayant eu une très longue expérience dans les diverses branches sus-nommées, nous sommes prêts à recevoir des marchandises à la commission pour la vente tractative ou aux enchères publiques, dans des conditions qui seront trouvées réciproquement avantageuses et satisfaisantes.

En échange des marchandises Européennes nous pouvons fournir des marchandises fabriquées aux Indes, n'importe quelle quantité, des premiers choix comme suit :

Des jouets d'enfants de Lucknow, articles de laiton et des draps d'or de Benarès, dinanderies de Moradalad, bijouteries d'or et d'argent de Delhi, châles, étoffes de Cachemire, etc.

Ayant des locaux spacieux pour l'étalage des marchandises en commission et pour la vente aux enchères, nous pouvons en toute confiance recommander notre maison à quiconque voudra entrer en relations d'affaires avec nous, et nous serons bien aises de recevoir des communications et des échantillons dans ce but.

Références

BANK OF BENGAL :

ROHILCNUD ET KUMAON BANK ;

AGRA BANK LIMITED.

Si c'est nécessaire, nous serons heureux de fournir d'autres références.

Toute communication doit être adressée à nous directement en anglais très détaillée, avec conditions et conventions y relatives.

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԴԱԼԵԱՆ
Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷՅԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie du Midi, M. SCHICKLER rue Vacon 50.